ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 327 – Ա

«27» մարտի 2025 թ. ք. Էջմիածին

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներով, ուսումնասիրելով ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1 ծածկագրով գնման ընթացակարգի Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

Վաղարշապատի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ենթակայությամբ գործող թվով 8 մանկապարտեզ ՀՈԱԿ-ների կարիքների համար կենտրոնացված եղանակով սննդամթերքի ձեռք բերման նպատակով 2024 թվականի նոյեմբերի 19-ին հայտարարված ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ)՝ մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Վաճառող), որի հետ 2024 թվականի դեկտեմբերի 26-ին կնքվել է N «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-2» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), իսկ 2024 թվականի դեկտեմբերի 30-ին՝ Պատվիրատուի /Գնորդ/, ենթակա ՀՈԱԿ-ների (այսուհետ՝ Երրորդ կողմ) և Վաճառողի միջև կնքվել են համապատասխան համաձայնագրերը:

Պատվիրատուի և Վաճառողի միջև ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-2 ծածկագրով կնքված՝ պայմանագրով նախատեսված է հետևյալը.

Պայմանագրի 2-րդ գլխի 2.1 կետի 2.1.7 ենթակետի համաձայն՝ *Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝*

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է **պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած **պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան (17 մարտի 2025 թ.) հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Արդյունքում՝ ղեկավարվելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7, 2.2.1-րդ, 8.11-րդ կետերը, Վաճառողի՝ 2025 թվականի մարտի 7-ի գրությունը՝ Վաղարշապատի համայնքապետարանի և «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-2» ծածկագրով գնման պայմանագիրը, ինչպես նաև դրա մաս կազմող 2024 թվականի դեկտեմբերի 30-ին Գնորդի, ենթակա ՀՈԱԿ-ների և Վաճառողի միջև կնքված համապատասխան համաձայնագրերը ամբողջությամբ լուծելու մասին խնդրանքը, և հաշվի առնելով Վաճառողի կողմից ապրանքի մատակարարման պարտավորությունը ոչ պատշաճ կատարելու հիմքը /1560 կգ ալյուր մատակարարելու փոխարեն 50 կգ մատակարարելու, 2070 կգ մակարոն մատակարարելու փոխարեն 40 կգ մատակարարելու, 2120 կգ վերմիշել մատակարարելու փոխարեն 50 կգ մատակարարելու փաստը/, Վաղարշապատի համայնքապետարանը միակողմանի ամբողջությամբ 2025 թվականի մարտի 17-ին լուծել է

Վաղարշապատի համայնքապետարանի և «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված թիվ ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-2 ծածկագրով պայմանագիրը և 2024 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված համապատասխան համաձայնագրերը՝ 1284328 /մեկ միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր քսանութ/ ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները և այն հանգամանքը, որ Վաճառողի կողմից թույլ է տրվել Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետում նշված խախտում և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Պատվիրատուն գտնում է, որ ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին անհրաժեշտ է ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ելնելով վերոգրյալից՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-2 ծածկագրով գնման ընթացակարգի Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված հիմքերը՝ «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:
2. «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված 1
Վաղարշապատ համայնքի ղեկավարի
2025 թվականի մարտի 27-ի
թիվ 327-Ա որոշման

Մասնակցի				
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ	02312903	ք. Երևան, Ն. Շենգավիթ 6 փ., 25-27	ա. **խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած **պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը**	27.03.2025 թ. ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**